ՓՈՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՄԻԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ.

ՅՈՒԼԻՍ ԵՒ ՕԳՈՍՏՈՍ

N: VII-VIII.

ՏՓԽԻՍ

1879.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ, ՏԱՃԿԱՀԱՅՔ ԵՒ ՌՈՒՍԱՀԱՅՔ

Կարելի չէ ընդհանրապէս խորհրդածող մարդու անտարբեր մնալ և չի մտածել այն վիճակին վրայ՝ որու մէջ կը գտնուի Օսմանեան լայնատարած ինքնակալութիւնը, և ի մասնաւորի նոյն միջոցին՝ և իցէ հայու իւր ազգին վրայ չի դարձնել միտքը և նորա ապագային վրայ չի խորհիլ։ «Ո՛ և իցէ» հայու ըսինք, վասն զի հայը օտարացեալ նաև իւր հայրենի երկրէն՝ հիւսիսային սառնամանեաց մէջ կամ այրեցած գօտւոյն տակ հառաչանք մը ունեցել է հին հայրենի երկրին համար, և ազգային աշխարհագրութեան ազէտներ տեսած ենք՝ որ իրենց պապենական յիշատակաւ՝ Տայոց գաւառի և Սիւնեաց երկրի վրայ տեղեկութիւն հարցնելու կ'ելնէին։

Այո՛, պետական մարդ՝ գիտնական մարդ՝ փիլիսոփայ՝ պատմաբան՝ վերջապէս աշխարհք բոլոր և ընդհանուր՝ իրաւունք ունին մեծ ինքնակալութեան մը ճգնաժամին վրայ մտածելու՝ խորհրդածելու. ոմանք իրենց շահերու կամ փնտռներու հետևանաց համար, ուրիշներ իրենց ուսման նիւթական և բարոյական պատճառներու քննութեան ճոխ նիւթ գտնելուն համար։ Բայց նոյնպէս և թերևս քիչմ՝ աւելի մեծ իրաւունք ունին հայ ազգի անհատները թէպէտ ցրուած՝ կամ մնացած հայրենի երկրին մէջ խորհրդածելու իրենց վիճակին վրայ, որ նոյն սէրութեան վիճակին հետևանք կրնայ լինիլ։

Երկու հարիւր տարի է որ քաղաքագէտ աշխարհք կը նշմարէր փոքրորկալից սև ամպերը որ Թուրքիոյ գլխուն վրայ կը ժողվուէին. կը տեսնէր վտանգը դուրսէն և ներսէն որ իրեն կ'սպառնար, և երկայն ժամանակներ ոչ ոք այս մեծ սէրութեան ղեկավարներէն չէր տեսնել վտանգը. կասկածոտ հայրենասիրութիւն՝ ոչ ուրուք սրտին թելերը չէր արթնցնել մահամերձ թմրութենէն, և պատճառ. վասն զի

անցելոյն փառքը և յիշատակին շլացուցիչ փայլը՝ Օսմանցի պետական մարդոց աչքը նսեմացուցեր էր, թերևս տգիտութենէն աւելի՝ կրօնական համոզմունք շնթած էր իրենց թէ՝ այդչափ յաջողութիւն տուողն Աստուած զիրենք չի կրնար թողուլ։

Իսկ երբ թուրքը վիճակն այսպէս կը տեսնէր և կը դատէր, հայը նոյնչափ տգէտ, նոյնպէս և նոյնչափ համոզեալ, և թերևս իրաւամբ թէ Օսմանցի թագաւորէն աւելի արդար ոչ ոք չկար իւր շահերը՝ իւր կեանքը պաշտպանող, նորա կենաց և գօրութեան համար աղօթք կ'ընէր։

Բայց երբ թագաւորական իշխանութիւն տէրութեան հետ միասին սկսաւ տկարանալ, երբ նորանոր աշխարհակալութիւնք ոչ միայն սկսան սանձուիլ՝ այլ նաև յարձակմունք յարձակմանց սկսան պատասխանել, երբ ժողովրդոց և կուսակալաց ապստամբութիւնք իրարու սկսան յաջորդել, հարստահարութիւնք և բռնութիւնք աղքատութիւնը երկրին մէջ սովորական ըրին, և կեդրոնական իշխանութեան գլուխ վեհապետին հրամանները անլսելի եղան, իւր հրովարտակները մեռեալ թուղթ մնացին նախարարաց ձեռք և կուսակալաց բարձի թողի եղան և չեղեալ համարեցան. անկայուն՝ վրանաբնակ՝ աւազակաբարոյ ժողովուրդք տանելի հարստահարութիւնքը անտանելի վիճակի հասուցին։ Հայաստանու բնիկ հայը տառապեալ, ճնշեալ, հոգեսպառ մեծ և պզտի աւազականերէ, ուրացաւ՝ մէկ մասը իւր բազմադարեան հաւատքը առ Աստուած, միւս մասն ուրացաւ իւր նախնեաց երկիրը՝ թողուց տուն՝ եկեղեցի և հարց և սիրեալ ազգաներ և գաղթեց յօտարութիւն. ինչ զարմանք նաև երբ մնացեալը հաւատարիմ երկրին և կրօնքին և թագաւորին արքայական անկարող արդարութեան վրայէն հաւատքը վերուց և օտարէն յոյս սկսաւ փնտռել, վասն զի տեսաւ նոյն ինք վեհապետը այս վերջին օրերս օտարին կը դիմէր, յոյս փրկութեան փնտռելու ի Բեռլին։

Հայ ազգին մէջ տեսանք մարդիկ բարձր իրենց դիրքով կամ դիտութեամբ կամ խելքով, որ իրենց ազգայնոց այս ձգտումնքը մեղադրեցին, իբրև թէ «հայ ազգը պէտք չէր դասել իւր շահերը Օսմանեան ինքնակալութեան շահերէն». մենք յայտնի կը գլուցենք թէ հայ ազգը չէր որ Բեռլին դիմելով իւր շահերը զատեց և որոշեց Տաճկական պետութենէն, այլ սխալ և ծուռ քաղաքագիտութիւնը որ շատ անգամ կը մոլորցնէ կառավարող ձեռքերը՝ այդպէս կարծեց

եւ ըստ այնմ շարժեցաւ ի միւս անձին՝ ի միւս հաւատարիմ. հան-գարտ ազգին՝ որ իւր գործունէն, առոյգ խաղաղ, ապրիլ կը փնտռէր, եւ խաղաղութեան տեղ գտան համաձայնք կը կրէր։

Զրուցենք՝ ցցնենք ուրեմն թէ ուր կը սկսայի Օսմանեան պետութեան քաղաքականութիւնը Հայոց վերաբերմամբ, եւ ի՞նչ կրնան ըլլալ Հայք եւ ի՞նչ պէտք են ըլլալ թէ նոքա-որ Հայրենի երկրին մէջ կը բնակին, թէ նոքա որ Հայրենեաց դուրս ղաղթեալ, չեն կրնար իբրեւ համազգային արենակից եղբայր՝ իբրեւ Քրիստոնեայ հաւատակրօն եղբայր չի տեսնել, չի լսել իրենց հարազատաց տառապանքը, նոցա եղերանաց ձայնը եւ անտարբեր մնալ՝ անկարեկիր։

Ա.

Հարիւր տարի կայ որ Հայ ազգին դրութիւնը Հայրենի երկրին մէջ անտանելի եղած է, վասն զի ինչպէս պատմութիւն, աւանդութիւնք, նոյնպէս եւ աւելի զօրաւոր աւերակք՝ աւերակաց վրայ կը վկայեն թէ հարիւր տարուան միջոցին մէջ այս ազգը տառապիւ տառապեր է, բայց միշտ յոյս պահելով եւ վստահանալով Օսմանեան ինքնակալաց խոստմանց վրայ, մանաւանդ վաթսուն տարուընէ ի վեր Սուլթան Մահմուտէ սկսեալ՝ որ շատ քաղաքագէտք եւ պատմաբանք վերանորոգիչ Օսմանեան պետութեան անուանեցին, ոչ խոստմունք եւ ոչ ամենափոքր զանգատանաց ձայն ձգած չէ, յուսալով թէ վեհափառք եւ կրօնական գլուխք մահմէտականութեան իրենց ձայնը եւ իրենց հրամանը լսելի ընել տալու ոչ միայն փափաք այլ եւ կարողութիւն ունէին։ Ուստի երբ արքայական հրովարտակներն կը քարոզեին կրօնից անխտրութիւն, օրինաց առջեւ հաւասարութիւն, դատաստանարանաց արդար իրաւարարութիւն, կառավարող անձանց անկողմնակալ ընտրութիւն, հարկաց արդար բաժանումն, ստացուածոց կենաց եւ պատւոյ ապահովութիւն, չէին կարծեր թէ այդ ահարկու Մէհմէտներու, Ահմէտներու, Սիւլէյմաններու թոռներուն, Սուլթան Մահմուտի Սուլթան Ապտիւլ—Մէճիտի, Սուլթան Ապտիւլ—Ազիզի, Սուլթան Մուրատի եւ Սուլթան Ապտիւլ—Համիտի հանդիսաւոր ու պատուաւորեալ հրովարտակք եւ սահմանադրութիւնք անկատար եւ անգործադրելի պիտի մնան. ուստի յուսով ապրեցան եւ ոչ միայն փորձով այլ եւ ոչ խօսքով եւ ոչ գրով բան մը բառ մը չարտասանեցին եւ չի գրոշմեցին Օսմանեան պետութեան դէմ։

Բայց եթէ չի խօսեցան և չի գործեցին, եթէ իրենց դարաւոր համատարածութեան չի դրժեցին, միթէ՞ կարելի էր այդ կեդրոնական զօրութեան վրայ որ կը խոստանար և չէր կրնար կատարել՝ որ գիտէր ներել ապստամբաց և անզգամաց և չէր կրնար պաշտպանել դատը անմեղ հլու աղերսարկուաց, կարելի՞ էր վստահութիւն ունենալ: Մանաւանդ որ նա հզօրն և ահարկու երբեմն, հիմա յայտնի կա-րօտ էր պաշտպանութեան քրիստոնեայ պետութեանց որ այդ վճռե-լու համար ժողովուեր էին ի Բեռլին:

Եւ որովհետև Սէն-Ստեֆանօի և Բեռլինի սեղաններէ ինկած փշրանքներ հայուն կենաց փոքր ճարակ մը խոստացան, պէտք էր որ Հայաստանի և Կիլիկիոյ հայը ամեն տեսակ և աւելի տառապանաց ու հալածանաց ենթարկէ. պէտք է՞ր որ դրսական թշուառութիւն մը կառավարութեան կողմէն վինք օգնական ըլլալու աշխատի. այս ահա մենք և հայ ազգը չէ կարող հասկնալ:

Այդ երիտասարդ Թուրքիան եթէ այդպէս կը ծառայէ հայրե-նեաց և Քեամիլ փաշային պէս կը մտածէ և խորհուրդ կուտայ վե-հապետին, կարծելով թէ Տաւրոսի բարձանց վրայ բնակող քանի մը հայք ջնջելով կենդանութիւն կ՚առնէ Տաճկաստան և թէ իր վտանգը հայոց ազգէն է՝ շատ կը սխալի: Փոխանակ ներքին, բայց ճշմարիտ բարեկարգութիւնք իրագործելու, երկիրն անապատացնելու դրութիւնը ոյժ և զօրութիւն չի տալ Օսմանեան պետութեան և թերթ թերթ կ՚ընկնին այդ գաւառները որ այդ մեծատարած ինք-նակալութիւնը կը կազմեն:

Եթէ իրօք վտանգ մը կայ պետութեան, իր ելևմտական վի-ճակն է, կոյր են անոնք որ չեն տեսներ և վտանգ հոն կը փնտռեն ուր չի կայ և ուր կ՚ուզեն ստեղծել յիմարաբար: Այսչափ տարի բարե-նորոգութիւն խոստանալ և չի կրնալ կատարել այլ վատէն ի վատ-թարագոյն երթալ, հո՛ն է վտանգը:

Փորձուած՝ յայտնի եղած ճշմարտութիւն է որ ինչպէս առան-ձին մարդկան. նոյնպէս պետութեանց համար միմիայն ճանապարհ կայ փրկութեան, լինել ուղիղ և պարզ: Մաքիավէլական քաղաքա-գիտութիւնը որ բռնութեան, խաբէութեան, ստութեան, և խար-դախութեան վրայ կը հիմնի՝ ոչինչ չի կրնար ստեղծել:

Մաքիավէլի հայրենեաց որդիք, Քավուր և Վիքտօր Էմմանուէլ Մաքիավէլական քաղաքականութեամբ չի կազմեցին Իտալիա, այլ պարզ՝ ճշմարիտ ուղղութեամբ և համարձակութեամբ անյուսալի և երազ

կարծուած խաղաղեան ճաշակեցին։ Սոլֆերինոյէ և Սատովայէ վերջ Աւստրիա նոյա օրինակէն խրատուած, իւր քայքայմունքէն կանգնեցաւ ոչ կեդրոնականութեան դիմելով և ոչ սահմանադրութեան հրապարակմամբ և առ ժամանակեայ գործադրութեամբ դուրսն ու ներսը շլացնելով, այլ հիմամբ և ուղղութեամբ ամեն ինչ գործադրելով։ Հոն էլ շահերը տարբեր էին, հոն նաև բազմազգի, բազմաձայր և բազմալեզու և բազմակրօն ժողովուրդք էին, բայց քաղաքագիտութիւն մը կար միացնելու համար շահերը, մօտեցնելու համար ազգերը, ընտելացնելու համար լեզուները, յարգելու համար կրօնները, և այսպէս կորուսեալ խաղաղիոյ տեղ, Աւստրիա չի խորշեցաւ դարաւոր անունը նաև փոխելէ, Աւստրիոյ-Հունգարիոյ անունն առաւ և Բօսնա գրաւեց, եթէ շրջակայքը նաև չի գրաւէ։

Կարելի է որ այդ երիտասարդ թուրքերը կարծատև կրօնամոլք, աշխարհիկ կամ համախոհք Քեամիլ փաշայի։ Կը խորհրդածեն թէ,
« ինչ օգուտ տեսանք Օսմանիոյ, Սերպիոյ տրուած յինքնուրոյ-
« թեանց կամ ինքնիշխանութեանց. ամեն դաշինք ոտնակոխ ըրին,
« վեհապետական լուծը խորտակելու ամեն ջանք ի գործ դրին,
« բուն, մեծ և հզօր թշնամին չի տեսնուած իրենք թշնամին դար-
« ձան, իրենց տկար և ողորմելի զէնքերը մեզի դէմ շարժելու ա-
« ռաջին փորձ ըրին, թշնամւոյն հետ դաշնակից, մեզ հպատակ
« եղողները զմեզ դաւաճանեցին և մեզի դէմ յարձակեցան, և մեր
« մեծ դաստաւորն Եւրոպա ոչ միայն մեր յաղթական զէնքերը դադ-
« րեցուց նոցա դէմ՝ այլ նաև այն բարբարոս ապստամբաց՝ որ մեր
« կալանաւորներն Կապանէին գազանաբար, քիթ և ականջ կը կտրէին,
« վերջին կողմնակալութեամբ վարուեցաւ։ Եթէ Եւրոպիոյ մասին մէջ
« մեր ծոցը օձ սնուցինք, պէտք չէ որ նոյն յիմարութիւնն ընենք
« մեր Ասիական Տաճկաստանի մէջ. խելօքութիւնը ջնջել փրցնել է
« այն ամեն տարրերը որ օր մը կրնան մեզ նոյն վտանգը ծնանիլ
« և օտարին ձեռնամխութեան առիթ և գործիք լինիլ։

« Հիմա, այս օր գոնէ Անգլիոյ շահերն կը պահանջեն որ փոքր
« Ասիոյ (մենք և Անգլիա Հայաստան բառը ոչ միայն չենք ճանչեր,
« այլ այդ անունը հնչող կզակները պէտք է ջախջախենք) մեր ա-
« նեցած երկիրները ազատ մնան օտարին միջամտութիւնէն և միջա-
« մտութեան ամեն առիթներէն. ուստի այդ սուրբ նպատակին հա-
« մար պէտք է և պետական իրաւունք կը պահանջէ որ ո՛ և իցէ կա-
« կածելի տարր անհետ ընենք, որպէս զի ապագայն ապահովենք.

« ուրեմն այդ Հայ ազգը վերցնելու, անհետ և անծանօթ ընելու ենք։
« Եւ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ. ամեն գործիք
« պատրաստ ունինք — Քիւրդ, Չէրքէզ, կուսակալ, դատաւոր, հարկա-
« հան, ոստիկան, վերջապէս ամենայն ինչ. կրօնական պատերազմ մը կը
« հրատարակենք, և դիւրին պատերազմ այնպիսի ազգի մը դէմ՝ որ
« ոչ զէնք ունի, ոչ զինուորութիւն և ոչ պաշտպան. երբ ընդհա-
« կառակն, մեք զէնք էլ ունինք, զինուորութիւն էլ և աշխարհիս
« ամենէն մեծ տէրութեանց մէկը՝ և ամենէն հարուստը մեզ նի-
« զակից է և մեր Ասիական աշխարհքին երաշխաւոր: Եւ եթէ այդ
« Հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնեայ Եւրոպա կրօնակից մը
« փնտռէ և չի գտնէ Տաճկական Ասիոյ մէջ, կը թողու զմեզ հան-
« գիստ և այն ատեն կ'զբաղինք ներքին գործերով և բարեկարգու-
« թեամբք: Ի՞նչ կը պակսի մեզ, — հո՛ղ, — մեր Ասիոյ երկրին տա-
« րածութիւնը միայն՝ գրեթէ չորս անգամ Ֆրանսայի չափ ընդար-
« ձակ է. ամեն տեսակ հարստութիւն, ամեն տեսակ կլիմա, ամեն
« տեսակ բերք, քաջ, պատերազմող, սակաւապէտ ժողովուրդներ, որ
« երբեմն աշխարհք բոլոր սարսեր են, և ամենուն կապ, կեդրոնա-
« կան կառավարութիւն նիւթական և անիւթական տապարով
« զինեալ: Ան ատեն կրնանք մեր ձայնը բարձրացնել, ան
« ատեն կրնանք մեր հին փառքը կենդանացնել, մեր իսլամական
« վիճակը կանոնաւորել, մեր դատարաններն օրինաւորել, արհեստ-
« ներ, գիտութիւնք ծաղկեցնել, փոխանակ դաս առնլու, դաս տալ
« Եւրոպայիս:...»

Ահա երազը որ կ'երազեն երիտասարդ Թուրքիոյ իմաստունք և գիտնականք, և չեն խորհրդածեր թէ՝ այդ ամեն բարելաւութեանց ոչ ոք արգելք չէ եղած ի քրիստոնեայ ժողովրդոց այսչափ տարիներէ ի վեր, ո՛չ նոքա որ այսօր ազատ են իրենց լծոյն և ոչ նոքա որ նոյն լծոյն տակ կը հեծեն, բարելաւութեանց կը սպասեն և ոչ բնաջինջ լինելու. պէտք է գիտնան այդ Քեամիլ փաշայի արբանեակք թէ կը սխալին իրենց բոլոր այդ տրամաբան խորհրդածութեանց մէջ:

Ո՛չ մէկ երկիր, ո՛չ մէկ ազգութիւն և ոչ ամենափոքր մէկ ժողովուրդ, Հելլէն, Ռումէն, Սերպ, Չեռնագորցի, շնորհք չեն տեսեր տիրող ազգէն, և ինչ որ եղեր են և են այսօր, բուռն, յուսահատ ջանքով և իրենց կրօնակից պետութեանց օգնութեամբ և թևարկութեամբ եղեր են, և ամեն յարաբերութեանց մէջ դժկամակութիւն, նախատինք, արհամարհանք տարեր են միշտ ինքնակալ կառա-

վարութենէն և փոխարէն իրենք հեռ և ատելութիւն տածեր իրենց պտոյն մէջ, և առաջին առթին չեն սապասեր, այլ այդ առիթը ստեղծելու ջանացեր են։ Եւ Եւրոպա մեծ գաղաւորը արդար լինելու համար պարտաւորուելէ, զանոնք անգութ վրէժխնդրութենէ և բնաջինջ լինելէ ազատելու համար օր մը լուծը թեթևցնել և վերջը այդ անիրաւ լուծը բնաւ խորտակել։

Քեամիլ փաշայի արբանեակները այս օր Տօրոսի լերանց վրայէն, վաղը Վանայ Ծովուն եզերքէն, միւս օր Մշոյ դաշտերէն բնաջինջ ընել կը մտածեն հայ ազգը և անունը։ Հայաստան անունը մենք հայերս՝ չենք պահեր, մենք աշխարհագրութիւնը մոռցած ժամանակնիս նաև աշխարհագիրք այդ երկրին անունը այլպէս պահեր են դարերով և մինչև մեր օրերը հասուցեր, և հիմա մեր ազգաբը երբ աշխարհագրութիւն գիտեն, այդ բառերը ջնջել. Քեամիլ փաշայի մը կարողութենէն վեր է։

Իսկ անզէն հայ ազգը անհետ և անձեռ ընել, այսօր, ներկայ ժամանակիս մէջ շատ դժուարին է, իսկ վաղը, ապագային մէջ անկարելի. վասն զի ապագան ձէնկիզներու՝ Լէկթիմուրներու չէ. դեռ այսօր կրնար գանուիլ և կան քաղաքագէտք՝ որ սկսրը, թշուառը արհամարհեն, հառաչանաց ձայներու խուլ լինին, ինկածին ոտնհար լինին, բայց մշտնջենաւոր չեն։ Վասն զի նոյն այդ քաղաքագէտք ամենապարտ իրենց քաղաքագիտութենէն, վերջին փորձ մը միայն կը խոստանան փորձել, և այս փորձին համար, ահա տարի մ՝ է որ ոսկւոյ մը զոհողութիւն չեն ընել։

Ապագային վրայ փոքրիկ վստահութեամբ, թէ մեր ազգին աւելի լաւ օրեր կը սպահէ, մտածենք թէ ինչ կարելի է ընել, այն ընենք և չի դանդաղինք. ճշմարիտ է որ շատ փոքր է մեր կարողութիւնը, և շատ մեծ է մեր անոք, անօգնական՝ յամենուստ լքեալ ազգին թշուառութիւնը, բայց մեզմէ թշուառներ էլ կան, մեզմէ աւելի մերժեալ և հալածեալ և տարագիրք ի հայրենի երկրէն կը գանուին, և նոքա այսօր լուռ՝ անձայն կ՝աշխատին և իրենց ազգը կը ջանան կանգնեցնել։ Ջանանք ուրեմն այս վիճակին մենք էլ դարմանն գտնել և հնարել։ Այս օր մենք մեզի օգնենք, վաղիւ Աստուած մեզի կ՝օգնէ և իր ձեռքը՝ պաշտպաններ՝ կը յարուցանէ՝ և նոյն իսկ Հայաստանի տեարց՝ քաղաքագէտ, խոհուն և հեռատես խորհրդականներ կարող է յարուցանել։